

«Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական ցանց»-ի (ՀայԿՏՈՒՑ) շահառուների առաջարկությունները Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության նոր սեկտորների և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ

Շահառուներ	Առաջարկություններ
<p>ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայություն Գազիկ Սուրենյան / կենտրոնի պետ/ +374 55629004 sinoptik.50@mail.ru</p>	<p>Հարմարվողականության տեխնոլոգիաների առաջնահերթությունների շարքում որպես կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության միջոց առաջարկում ենք գյուղացիական տնտեսություններին ջրաօդերևութաբանական տեղեկատվության ներկայացման համակարգի ստեղծումը և կատարելագործումը</p>
<p>«Ջրային, կլիմայական և ռեկրեացիոն ռեսուրսների Միջազգային գիտահետազոտական կենտրոն» ՀԿ Քրիստինա Հակոբյան / գործադիր տնօրեն/ +374 94 545024 chakopian@ysu.am</p>	<p>Ինչպես հայտնի է, Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների հիմքում դրված է էկոհամակարգային մոտեցման և կանաչ էկոնոմիկայի սկզբունքները, ուստի առաջարկում ենք Կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտներից առաջնային համարել բնական էկոհամակարգերի (ջրային ու ցամաքային այդ թվում անտառային էկոհամակարգերն ու դրանց կենսաբազմազանությունը, հողային ծածկույթը) սեկտորը: Բնական էկոհամակարգերի սեկտորում կատարված գործողություններով կարելի է նպաստել նաև մյուս սեկտորների առողջացմանը:</p>
<p>Այգեստան համայնք, Արարատի մարզ Սոկրատ Հովսեփյան / համայնքապետ/ +374 91510193</p>	<p>Հարմարվողականության տեխնոլոգիաների առաջնահերթությունների շարքում առաջարկում ենք ոռոգման և ցամաքուրդային (դրենաժային) համակարգերի /ջրանցքների/ կատարելագործումը, կաթիլային ոռոգման ներդնումը որպես կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության միջոց:</p>
<p>ԵՊՀ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Կայուն զարգացման կենտրոն Ռուբեն Մովսեսյան / կենտրոնի պետ/ (+374 60) 710 452 rubmov@ysu.am</p>	<p>Մեղմման տեխնոլոգիաների առաջնահերթությունների շարքում հանքային դաշտերի տարածքում ձևավորվող ջրային ավազանների էկոլոգիական վիճակի վերաբերյալ տվյալների տրամադրում գյուղատնտեսական համայնքներին:</p>
<p>Երևանի պետական համալսարան Մարատ Գրիգորյան / ղեկան/</p>	<p>Տարբեր տարիների ԵՊՀ Ջրաօդերևութաբանության մագիստրատուրայում կատարվել են</p>

(+374 60) 71-04-31
+374 99 655810

geo@ysu.am

բազմաթիվ հետազոտական աշխատանքներ և պաշտպանվել են մագիստրական թեզեր, որոնք կարող են լուրջ ներդրում հանդիսանալ Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության նոր սեկտորների և նոր տեխնոլոգիաների հստակեցման գործում:

Նշենք դրանցից մի քանիսը:

1. ՀՀ ջրային տնտեսության խոցելիությունը և հարմարվողականության ուղիների մշակումը կլիմայի փոփոխության կոնտեքստում
2. Կլիմայի փոփոխության ազդեցությունը մարդու առողջության վրա (ՀՀ օրինակով)
3. Երևանի կլիման. փոփոխության արդի միտումները
4. Շիրակի մարզի ջրապահովվածության ռիսկի գնահատումը կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում
5. Սևանա լճի ավազանի գետերի սակավաջուր հոսքի տարածաժամանակային փոփոխությունը և ռիսկի գնահատումը կլիմայի փոփոխության պայմաններում
6. Արարատյան արտեզյան ավազանի վերլուծումը և արդի վիճակի գնահատումը
7. Ջրամբարների ազդեցությունը միկրոկլիմայի ձեւավորման վրա (ՀՀ օրինակով)
8. Հրազդանի ավազանի գետերի անթրոպոգեն ծանրաբեռնվածության վերլուծումը և գնահատումը
9. Գետերի առավելագույն հոսքերի դրսևորման առանձնահատկությունները կլիմայի փոփոխության համատեքստում (ՀՀ գետերի օրինակով)
10. Բնական էկոհամակարգերի վերլուծումը և խոցելիության գնահատումը կլիմայի փոփոխության համատեքստում (Սևանա լճի ավազանի օրինակով)